Գյուղին բիչ հեռու, ջաղացքներու մոտ, բավ բավմի, երկու անձև ժայռեր կային։ Գյուղացիները այդ ժայռերը Աստղկան սայլ կկոչեին։

Փոքրիկ, շատ փոքրիկ էինք։ Օր մը Աստղկան Սայլին բավ առվակին եզերքը կխաղայինք, երբ ծեր ջաղացպանը մեզ իր մոտ կանչեց ու բաւ.

«Ինձ մոտ եկե՛ք մանուկներ. ձեզ բաղարչ պիտի տամ. եկե՛ք, նստեցեք. ես ձեզ պիտի պատմեմ Աստղկան Սայլին հետքիաթը աղվոր»։

Եվ ծեր ջաղացպանը իր հնամաշ գոտիեն ծխամորճն հանեց ու այսպես պատմեց։

Կար ու չկար ձկնորս մը կար։ Այդ ձկնորսը, գիշեր մը, լապտերը վառեց, շալկեց իր ուռկանն ու ծովափ իջավ։ Երկնի վրա կային լիք աստղեր. աստղեր կային ծովուն մեջ։

«Ծովն ի՞նչ խաղաղ է»— բսաւ ձկնորսը ու նավակ մտավ. նավակի բթին՝ լապտերը կախեց ու սկսավ թևաձկներով, խոշոր մատյանի մը հին թերթերուն պես, թերթ-թերթ, թերթատել էջերը ծովին։

Շատ գնաց թե բիչ, «Հոս ձուկեր շատ կան», բսաւ, կանգ առավ ու ուռկանը ծով նետեց հանդարտ։ Երկա՜ր սպասեց ու հեղ մ՚ալ, տեսնես, ուռկանը ծանր դուրս բաշեց ծովինե՞ր, ի՞նչ տեսնե, աստղե՜ր, աստղե՜ր, ուռկանին մեջ լեփլեպուն աստղեր. աստղերուն կպած մի քանի շարժկլտող կարմիր խեցիներ։

«Աստղերն ինչ ընեմ, ես ձուկ կուզեմ, ձուկ լեցուն ուռկանով։ Աստղերն ի՛նչ ընեմ»,— բսաւ ձկնորսը, տրտմեցաւ, ու լուսապեմին ուռկա մը լեցուն աստղերը շալկեց, ուղիղ տուն գնաց։

«Հէ՛յ, կնիկ, դուրս ե՛կ. աստղեր եմ բերեր»,— պոռաց ձկնորսը։ «Է՛հ, ի՛նչ յոռ բախտ. ուռկանը նետեցի, աստղեր դուրս եկան։ Աստղերն ի՛նչ ընեմ»։

Կինը արթնցաւ ու դուրը բացաւ. բոլոր աստղերուն՝ ուռկն վար առաւ։

«Օ՛հ, ի՛նչ ազուոր են. օ՛հ, ի՛նչ փայլփլուն»,— ձկնորսին կինը բսաւ ու խնդաց. խնդաց ու պարեց. յատակեց ու էրկան վզին փաթթուեց, հափ հափ համբուրեց։

«Օ՛հ, ի՛նչ ազուոր են. ես ձուկն ի՛նչ ընեմ»,— բսաւ ու մեկ-մեկ վեր առաւ աստղ ուրն, իր վզին կապեց, զույգ ականջներուն զույգ օղեր շինեց, մատներուն անցուց ու հատ մ'ալ այծին կոտոշէն կախեց։

Հաջորդ առաւոտ, կանուխ, ձկնորսը, աստղերու դեզ մ'իր սայլին մէջ լեցուց ու դուրս հաննեց փողոց, ծախելու համար։

«Աստղեր, հա՛ աստղեր,
Շատ աժան աստղեր»։

Փողոցն փողոց պոռաց ձկնորսը։

Գյուղացիները դռներնին բացին, ձկնորսի ձայնին ականջ ծռեցին։

Գյուղացի կիներ, ձկնորսը իրենց տուն կանչեցին։

«Հէ՛յ, ձկնորս աղբար, ինձ աստղեր կուտա՞ս։ Հէ՛յ ձկնորս աղբար, տես՝ ի՛նչ ազուոր եմ։ Ես հոս միևնակ եմ... եկուր, ներս եկուր. ա՛յ ձկնորս աղբար ես դրամ չունիմ, ինձ աստղեր կուտա՞ս»։

Ազնըսեցին այն կիները, որոնք դրամ չունեին։

Ձկնորսը կուտար, ով որ դրամ տար։

Կառապանն առաւ զույգ ձիերուն ճակատներեն զույգ աստղեր կախեց։ Բնճպերն առաւ իր ժիր եզներուն վիզերեն կապեց։ Պառաւն իր կովին կռնակին փակցուց։ Ամէն, շատ ամէն. կիները ամէն, չանչուլ կախեցին, մինչև կոշիկնուն վրա չարիցին։

Ձկնորսը կուտաք, ավ որ դրամ տար։

«Աստղե՜ր, հա՜ աստղեր,
Շատ աժան աստղեր»։

Գեղին մեկ ծայրը, խարխուլ տան մը մեջ, այն հին օրերուն կապրեր մենուճար խեղճ բանաստեղծ մը։ Գյուղացիք անոր Աշուղ կըսեին։ Աղքատ աշուղը տան պատեն կախած իր կիթառեն զատ ա՛լ ոչինչ ուներ։

Աշուղը լսեց ձկնորսին ձայնը, իր սազը առավ, դուրս ելավ դոնեն։ Փորրիկ սայլի մը վրա տեսավ աստղերու դեզ մը։ Երկնքի աստղեր, վերեն վար իջած իրական աստղեր, որ խեղճ աշուղը, մերկ ու անոթի, հեռավոր աստղեր միշտ երազելով միայն ապրած էր։

Իր սազը ձեռքին՝ աշուղն աղերսեց — «Ա՛յ ձկնորս աղբար, քեզ լավ երգ կերգեմ, ինձ աստղ մը կուտա՞ս»։

«Չէ, չեմ տար»։

«Ա՛յ ձկնորս աղբար, սայլդ ես քաշեմ. ես դրամ չունիմ, ինձ աստղ մը կուտա՞ս»։

«Չէ, չեմ տար ըսի»։

«Ա՛յ ձկնորս աղբար, իմ կյանքը քեզի, իմ սազը քեզի, ինձ աստղ մը կուտա՞ս»։

«Չէ, չեմ տար ըսի. ես սազն ի՞նչ ընեմ»։

Ու խեղճ աշուղը սայլին ետևեն գնաց ու գնաց, ոտքերը բոպիկ, հոգնած, քրտնած սազն անութին տակ, սայլին ետևեն գնաց ու գնաց։

Ձկնորսն իր սայլով գյուղեն դուրս ելավ, ուրիշ գյուղ մտավ. անցավ այգիներ, կամուրջներ անցավ։ Աստղերը ծախեց թե՛ չորեքշաբթին և թե՛ ընձեղերին։ Մի քանի աստղեր հազիվ մնացին։

«Ա՛յ, ձկնորս աղբար, թո՛ղ բոնեմ աստղ մը, ձեռքիս մեջ առնեմ»,— միշտ կաղերսեր աշուղը հոգնած։

Երեկո էր, արևմտյան, ձկնորս ու աշուղ գյուղ շտկվեցան։ Մեյ մըն ալ, տեսնես, մութ ջաղացքներեն մեծ հով մը փըրթավ ու արագ-արագ գյուղին մեջ դարձավ։ Հատ-հատ հավաքեց աստղերը բոլոր — կովին կռնակեն, ձիուն ճակատեն, կիներու սեպ սև վարսերուն մեջեն, բուխերիկներեն, պա-

տուհաններին, ու բաց մնացած դռներու միջին, աստղերն հովին հետ դեպի երկինք թռան. հոն ամեն մեկ աստղ իր տեղ թառեցավ։

«Հե՜յ ժամ ելավ, ժամ իմացա՞ք։ Մեր տունը ամբողջ հիմեն սարսեցավ»։

Գյուղացիները ելան, շփոթած իրարու ձայն տվին։

«Ո՜ւյ, ո՜ւյ, աստղերս առին, առին ո՞ւր տարին։ Վա՜յ այն ձկնորսին, վայ այն կախարդին»։

Եվ խելագարներու պես գյուղացիները չորս կողմ իննկան ու փնտրեցին ձկնորսը կախարդ։

«Հեյ, լծվոր, հե՜յ ջրվոր, ձկնորսը տեսա՞ք»։

«Չա՜ տեսա, ձկնորսը կամուրջին կանցներ, աստղեք կծախեր ու իրեն ալ անոր հետև կվազեր»։

«Չա՜, չա՜, տեսա ձկնորսը ջաղացքներուն մոտ. աստղերը ծախեր ու դյուզ կդառնար»։

Այս ամբոխուն վրա, փոքրիկ մանուկներ, այն կապույտ հովը փոթորիկ կարծավ։ Փոթորիկը գնաց ձկնորսին սայլին վրայեն անցավ. մնացած մի քանի աստղերը առավ ու երկինք տարավ։

Էհ, ի՜նչ փոթորիկ...

Կայծակի մը պես կայծ տվավ, շանթեց։

Ձկնորսը այրող հոսանք մը զգաց. ցնցվեցավ, սեցավ...

Գյուղացիներն եկան. հունա, այդ առավոտին քով, ձկնորսն իր սայլին հետ քար արձան գտան։

Աշուղն ալ ըսես, փոթորկին հետ ափուչիք եղավ...

Աստղերն, աշուղին դույգ թևեր տվին, առին վեր տարին։ Վեր տարին, իրենց խաղընկեր չ՝ ին։